

ԷԼՄԻՐԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ



ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՆԵՐԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Միջազգային իրավունքի և ներպետական, ազգային օրենսդրության փոխհարաբերության խնդիրը իրավական բարեփոխումների գործընթացում անխուսափելիորեն ձեռք է բերում առանցքային նշանակություն: Միջազգային իրավունքի համընդհանուր նորմերն ու սկզբունքները ակամա իրենց ներազդեցությունն ունեն մասն առնալով երկրների ազգային օրենսդրության վրա, որոնք վարում են համեմատաբար մեկուսի քաղաքականություն: Առավել ևս այդ ներազդեցությունը զգալի է եվրոինտեգրման ուղին բռնած երկրների պարագայում:

Երբ խոսքը գնում է միջազգային իրավունքի չափանիշների և ներպետական, ազգային օրենսդրության փոխհարաբերության մասին, գրեթե առանց վերապահումների գերիշխում է հիմնախնդրի ուսումնասիրության սուկ միակողմանի մոտեցում, ըստ որի՝ Եվրոպական խորհուրդ մտնելու ձգտում ունեցող երկրները նախապես համապատասխանեցնում են իրենց իրավական համակարգը և պրակտիկան ներկայացվող պահանջներին: Չուտ իրավական ընթացակարգերի տեսանկյունից դա իսկապես այդպես է, սակայն այդ փոխհարաբերությունների ողջ համակարգն ունի շատ ավելի ընդգրկվում ու բազմաբնույթ դրսևորումներ:

Իրավահամեմատական վերլուծությունը բերում է այն համոզման, որ ոչ միայն նախկին խորհրդային ու սոցիալիստական երկրներն են պատրաստվել եվրոինտեգրման գործընթացին, այլև միջազգային կառույցներն են (այդ թվում՝ Եվրոպական խորհուրդը) պատրաստվել այդ երկրներին ընդունելու ոչ պակաս բարդ

գործընթացին: Եթե փորձենք վերլուծել, օրինակ, մարդու իրավունքների և ազատությունների հիմնադրույթների վերաբերյալ մեկնաբանությունների, ինստիտուցիոնալ առավել արմատական բարեփոխումների գուտ ժամանակագրական զարգացումները, ապա դժվար չի լինի նկատել, որ դրանց զգալի բաժինը համընկնում է 1990-ական թվականների կեսերին:

Եվրոպական խորհրդի անդամ երկրներում համարժեքորեն գիտակցում էին, որ նորանկախ և ժողովրդավարական ուղին ընտրած պետությունների մուտքը դեպի եվրոինտեգրում անխուսափելի էր, մյուս կողմից ևս գիտակցում էին, որ հիշյալ երկրների համար գործող չափանիշները հազիվ թե բավարար լինեին. անհրաժեշտ էր սեղմ ժամկետում ձևավորել և կյանքի կոչել առավել «խիստ» ու կամայականություններ չհանդուրժող պահանջներ: Վերջին հաշվով այն հիմնադրույթները, որոնք լիովին բավարար էին ժողովրդավարության ավանդույթներ ունեցող պետությունների համար, հազիվ թե նույն արժեքն ունենային այն երկրների պարագայում, որոնցում դեռևս գերիշխող էր խորհրդային մտածելակերպը, համայնավարական ավանդույթները և այլն:

Ընդ որում, հիշյալ պատմական ժամանակահատվածում շեշտադրումը հիմնականում արվում էր վերահսկողական լծակների կատարելագործման վրա, ինչը ևս բացատրելի է, եթե նկատի ունենանք, որ նոր անդամ երկրներում համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքների կիրառման երաշխիքներից մեկը հենց բավարար վերահսկողությունն ապահովելն

էր: Դեռևս 1992թ. Կոնվենցիայի վերահսկողական ընթացակարգերի և լծակների արմատական բարելավման անհրաժեշտությունն ընդգրծեց Եվրոպական խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, իսկ արդեն 1993թ. այդ հարցի կապակցությամբ որոշումներ ընդունեցին Եվրոմիության անդամ բոլոր պետությունների կառավարությունները: Պատահական չէ, որ 1994թ. Կոնվենցիայի 11-րդ արձանագրությամբ ձևավորվեց մեկ միասնական Եվրոպական դատարան, որը փոխարինեց նախկին եռօղակ համակարգին:

Վերը նշված բնույթի բարեփոխումների անհրաժեշտությունը պայմանավորված էր նաև բողոքների քանակի կտրուկ աճով: Ընդ որում, դիմումների քանակի աճն իր հերթին թելադրված էր դիմումների ընդունելության ընթացակարգերի հստակեցմամբ ու պարզեցմամբ, ինչպես նաև երաշխավորված իրավունքների ու հիմնարար ազատությունների շրջանակի ընդլայնմամբ¹:

Կարծում ենք, որ Կոնվենցիայի պարագայում վերահսկողական գործառույթների վրա հատուկ ուշադրություն դարձնելը թելադրված էր նաև բուն այդ միջազգային փաստաթղթի առանձնահատկությամբ: Խնդիրն այն է, որ Եվրոպական խորհրդի անդամ երկրները պարտավորություններ են ստանձնում ոչ թե միմյանց հանդեպ, ինչը բնորոշ է այլ բազմակողմ համաձայնագրերին, այլ պարտավորվում են իրենց գործառույթներն իրականացնելիս պահպանել բոլոր անդամ պետությունների համար մշակված և հաստատված միասնական իրավական չափանիշները: Ընդ որում, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ իրավական չափանիշները հիմնականում առնչվում են պետության ներքին քաղաքականությանը և խիստ հազվադեպ են շոշափում միջազգային հարաբերությունները:

Կոնվենցիան և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային այլ հիմնարար փաստաթղթերը գործնականում հաշվի առնելու և դրանցով ղեկավարվելու բավականին հաջողված պրակտիկա է ձևավորվել, սակայն հարկ է

նկատել, որ այդ խնդրի էլ ավելի բարենպաստ լուծման համար դեռևս արդյունավետ իրավական հիմքեր չեն ձևավորվել: Այս ասպեկտով շոշափելի դերակատարում ունեն նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության նկատմամբ կայացված և ուժի մեջ մտած վճիռների առնչությամբ կատարված աշխատանքները: Ճիշտ է դրանք դեռ 7-ն են, սակայն առնչվում են մարդու իրավունքների և ազատությունների բազմաբնույթ ոլորտներին: Հավելենք միայն, որ դրանցից միայն 4-ը վերաբերում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումներին, ինչը, կարծում ենք, հնարավորություն է տալիս որոշ վերապահումներով դատողություններ անելու ձևավորվելիք միտումների մասին:

Մինչ կոնկրետ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) ներազդեցության հիմնահարցերին անդրադառնալը, նպատակահարմար ենք համարում վերլուծել ներպետական օրենսդրության և ազգային օրենսդրության փոխհարաբերության իրավական հիմքերը և դատողություններ անել այն հարցի շուրջ, թե որքանով են դրանք նպաստում նշված ներազդեցության լիարժեքությանը: Համոզված ենք, որ այս հարցի պատասխանը կնպաստի նաև համարժեք պատկերացում կազմելու այն հիմնախնդիրների վերաբերյալ, որոնք ներկայումս ձևավորվել են ազգային օրենսդրությունը Կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու կտրվածքով:

ՀՀ Սահմանադրությունը՝ ինչպես ներկա, այնպես էլ նախկին խմբագրությամբ, որդեգրել է մոտեցում, ըստ որի վավերացված միջազգային պայմանագրերը գերակայում են օրենքներին. «Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել»: Այժմ տես-

ներք, թե այս, թերևս, հանրահայտ դրույթները ինչ իրավական ընթացակարգերով են երաշխավորված: Ընդ որում, սա չափազանց կարևոր հարց է, քանզի միայն հստակ ընթացակարգերի շնորհիվ է իրական դառնում ցանկացած սահմանադրական հիմնադրույթ:

Վերը նշված սահմանադրական դրույթից բխում է, որ իրավաստեղծ գործունեությունը կարգավորող օրենսդրությունը պետք է միտված լիներ ամրագրելու նվազագույնը հետևյալ նորմերը՝

ա) օրենքները պետք է համապատասխանեն ինչպես Սահմանադրությանը, այնպես էլ՝ վավերացված միջազգային պայմանագրերին,

բ) փորձագիտական եզրակացությունը պետք է ներառի վավերացված միջազգային պայմանագրերին օրենքի և այլ իրավական ակտերի նախագծերի համապատասխանության վերաբերյալ առանձին գնահատական,

գ) վարչական արդարադատություն իրականացնելիս վարչական ակտի իրավաչափությունը որոշելու համար հիմք պետք է ընդունվեն ինչպես Սահմանադրությունը, այնպես էլ՝ վավերացված միջազգային պայմանագրերը,

դ) սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատություն իրականացնելիս չպետք է կաշկանդված լինի որևէ ազգային օրենքով:

Հիշյալ պահանջները, կարծում ենք, սպառնիչ չեն, սակայն դրանք իրենց ամբողջության մեջ կարող են նպաստել հիմնախնդրի լուծմանը: Հավելենք նաև, որ թվարկված հարցադրումներից յուրաքանչյուրը բովանդակային առումով խիստ տարողունակ է, ուստի մենք դրանց կանդորադառնանք բացառապես մեր կողմից առաջադրված թեմային առնչվող ասպեկտներով:

Նախ, անդրադառնանք այն հարցին, թե ինչ իրավական կարգավորում է տրված օրենքների և միջազգային պայմանագրերի փոխհարաբերության խնդրին: «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

քի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին»: Տվյալ դեպքում, ըստ էության, անտեսված է միջազգային պայմանագրերին համապատասխանելու հարցը: Ճիշտ է, նույն օրենքի մեկ այլ՝ 21-րդ հոդվածում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետության օրենքները և այլ ակտերը պետք է համապատասխանեն միջազգային իրավունքի համընդհանուր նորմերին և սկզբունքներին: Ընդ որում, ըստ հիշյալ հոդվածի. «Համընդհանուր ճանաչում գտած են համարվում միջազգային իրավունքի այն նորմերն ու սկզբունքները, որոնք իրավաբանորեն հավասար ուժ ունեն բոլոր պետությունների, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության համար»:

Արտաքուստ թվում է՝ նշված բնորոշումը որոշ առումով համարժեք է վավերացված միջազգային պայմանագրի հասկացությանը, սակայն համալիր վերլուծությունը բերում է այլ համոզման: Նախ, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ կնքված ու վավերացված ցանկացած պայմանագիր չէ, որ բովանդակում է համընդհանուր նորմեր և սկզբունքներ: Բացի այդ, միշտ չէ, որ հնարավոր է հստակ կանխորոշել, թե որ նորմերն են համարվում բոլոր պետությունների համար պարտադիր ու հանրաճանաչ:

Հաջորդ հարցադրումը նշված խնդրի տրամաբանական շարունակությունն է. եթե օրենսդրությամբ, այնուամենայնիվ, պարտադիր է համարվում միջազգային իրավական չափանիշների պահպանումը, ապա հարկ է, որ պեսզի այն ուղեկցվի համապատասխան իրավական երաշխիքով: Օրինակ՝ օրենքների նախագծերի իրավական փորձաքննության կարևորագույն տարրերից պետք է համարվի օրենքների համապատասխանությունը վավերացված միջազգային պայմանագրերին: Մինչդեռ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի համաձայն. «Նորմատիվ իրավական ակտերը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխանեցնելու, ինչպես նաև այդ ակտերի մշակման ժամանակ սույն օրենքի պահանջների և օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանումն ապահովելու նպատակով պարտադիր պետական իրավական փորձաքննության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում»: Այսպիսով, կոնկրետ փորձաքննության դեպքում անգամ բաց է թողնված սահմանադրական դատարանի որոշումներին համապատասխանության հարցը:

Գործնականում, իհարկե, փորձաքննության փուլում նկատի են ունեցվում ինչպես վավերացված միջազգային պայմանագրերը, իսկ մարդու իրավունքների հետ կապված իրավական ակտերով՝ նաև Կոնվենցիան, այնպես էլ՝ սահմանադրական դատարանի որոշումները, սակայն դա, ինչպես ասվում է, թողնված է բարի կամքին:

Հաջորդ խնդիրը վերաբերում է վարչական դատավարության շրջանակներում վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս վավերացված միջազգային պայմանագիրը հիմք ընդունելու հարցադրմանը: Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետության Նախագահի նորմատիվ բնույթ ունեցող ակտերի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի նորմատիվ որոշումների, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի որոշումների՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին (բացի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը»:

Անհրաժեշտ է նկատել, որ միջազգային պայմանագրերն ընդհանրապես անտեսված չեն հիշյալ օրենսգրքով, մասնավորապես, սույն

օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «135-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ այդ նորմատիվ իրավական ակտերով խախտվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլխում, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներում ամրագրված իր իրավունքները»: Կարծում ենք՝ սաշատ կարևոր դրույթ է, սակայն այս դեպքում ևս միջազգային պայմանագրերի շրջանակը անհարկի նեղացված է, քանի որ ներկայացված ձևակերպումը՝ «մարդու և քաղաքացու իրավունքներին վերաբերող միջազգային իրավունքի նորմեր», թերևս, չի ներառում բոլոր վավերացված միջազգային պայմանագրերը և կարող է անհարկի տարրնթերցումների տեղիք տալ:

Սակայն, եթե վարչական դատավարության օրենսգրքի պարագայում մասամբ լուծվել է հիշյալ խնդիրը, ապա դատավարության մյուս օրենսգրքերում այդ հարցն ընդհանրապես անտեսվել է: Միջազգային պայմանագիրը հիշյալ օրենսգրքերով պարզապես դիտվում է որպես իրավունքի աղբյուր:

Վերջին հարցադրումը վերաբերում է այն իրավական ակտերի շրջանակին, որոնք պարտադիր են սահմանադրական դատարանի համար: Ըստ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին»: Այս դրույթը, կարծում ենք, լուրջ աղերսներ ունի սահմանադրական դատարանի սահմանադրական կարգավիճակի հետ:

Նախ, անհասկանալի է, թե ինչո՞ւ է տրվյալ դեպքում նախապատվությունը տրվել մի-

այն մի օրենքի, ինչ չափանիշներով է այդ օրենքը գերակայում մյուս օրենքներին: Բացի այդ, խոսքը դատական այն ատյանի մասին է, որն իրավասու է որոշելու յուրաքանչյուր օրենքի, այդ թվում և՛ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանադրականությունը, հետևաբար, ոչ մի օրենք չի կարող մեկ այլ օրենսդրական ակտով՝ տվյալ դեպքում՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, նախապես ճանաչվել գերակայող և պարտադիր իրավական հիմք սահմանադրական դատարանի որոշման համար: Բնականաբար, սահմանադրական դատարանը ևս պարտավոր է ղեկավարվել օրենքներով և իր որոշումները համապատասխանեցնել օրենքներին, սակայն դա բնավ չի նշանակում, որ դրանցից որևէ մեկին կարելի է նախապատվություն տալ:

Այն, որ նախապես չի կարող որևէ օրենք ճանաչվել Սահմանադրությանը լիարժեք համապատասխանող և այդ հիմքով էլ չի կարող վիճարկվել, կարծես անվիճելի է²: Ընդ որում, պրակտիկ վերլուծությունները ևս այդ մասին են վկայում: Մասնավորապես, դրա վառ ասպարեզում է սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի որոշումը, որով կարճվել է «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթներ վիճարկելու վերաբերյալ քաղաքացի Ռ.Թորոսյանի դիմումի առնչությամբ քննված վարույթը:

Տվյալ դեպքում, թերևս, անտեսվել է այն, որ սահմանադրական դատարանը ղեկավարվում է ոչ միայն Սահմանադրությամբ, այլև վավերացված միջազգային պայմանագրերով ու ներպետական օրենքներով:

Առկա է նաև մեկ այլ հարցադրում. ի՞նչ կարգով կարելի է վիճարկել այն օրենքը կամ իրավական այլ ակտը, որը հակասում է վավերացված միջազգային պայմանագրերին: Կարծում ենք՝ օրենսդրական հետագա զարգացումները պետք է անդրադառնան նաև այս խնդրի լուծմանը:

Այս պահին պարզապես նկատենք, որ ձևավորվել են մի շարք աշխատանքային խըմ-

բեր, որոնք մշակում են դատավարական օրենսգրքերի նախագծերը և որոնց առջև դրված է հիշյալ խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

Ինչևէ, ներկայումս արդիական մեծ նշանակություն է ձեռք բերել ոչ միայն Կոնվենցիայի դրույթներին համահունչ օրենսդրական ակտեր ընդունելու, այլև արդեն իսկ գործող օրենսդրական ակտերը այդ փաստաթղթին համապատասխանեցնելու խնդիրը:

Գործնական վերլուծությունները ցույց են տալիս, որ այդ ոլորտում արդեն իսկ շոշափելի քայլեր են կատարվում, սակայն այդ գործընթացը դեռևս համակարգված տեսքով բարելավման կարիք ունի: Այսպես՝ վերջին շրջանում կիրառման մեջ է դրվել կոնկրետ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռներից բխող օրենսդրությունում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրինագծեր մշակելու և Ազգային ժողով ներկայացնելու պրակտիկան:

Բնորոշ են, թերևս, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ պարբերությունը և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ օրինագծերը, որոնք Ազգային ժողովում արդեն քննարկման են ներկայացված 2-րդ ընթերցմամբ: Այս նախաձեռնությամբ, մասնավորապես, առաջարկվում է դատարան դիմելու առընչությամբ պետական տուրքից ազատելու իրավական հնարավորություն նախատեսել ոչ միայն ֆիզիկական, այլև անհատ ձեռներեցների և իրավաբանական անձանց համար: Տվյալ օրինագծերի համար հիմք է հանդիսացել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008թ. հունիսի 2-ի՝ «Պայքար և հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճիռը:

Կարևոր է ընդգծել, որ հաճախ, իսկ վերոհիշյալ դեպքը այդ առումով բացառություն չէ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի խախտումներ են ար-

ձանագրվում այնպիսի օրենսդրական ակտերի կապակցությամբ, որոնք արտաքուստ կարծես խնդիրներ չեն առաջացրել, չեն դարձել քրննարկման առարկա, չեն համարվել ակնհայտ անիրավաչափ: Այսպես՝ որոշ դեպքերում պետական տուրքերից միայն ֆիզիկական անձին ազատելու դիրքորոշման հիմքում դրվել էր այն չափանիշը, ըստ որի՝ այդ արտոնությունը անհատ ձեռներեցին և իրավաբանական անձին վերապահելու դեպքում կխախտվեր ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված (8-րդ հոդված) ազատ տնտեսական մրցակցության սկզբունքը: Հիմա արդեն համեմատաբար հեշտ է դատողություններ անել, որ այդ դիրքորոշումն այդքան էլ իրավաչափ չի եղել և այլն, ուստի դրան չարժե անդրադառնալ:

Այս օրինակը նաև այլ բնույթի դատողությունների տեղիք է տալիս. մասնավորապես, եթե կոնկրետ Հայաստանի Հանրապետության առնչությամբ կայացված վճիռները կարող են հիմք հանդիսանալ օրենսդրական բարեփոխումների համար, ապա ինչո՞ւ նույն դերը չեն կարող ունենալ նաև ընդհանրապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները, հատկապես՝ նախադեպային դատական ակտերը: Այս առումով, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում խնդիր է դրված ուսումնասիրելու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերը և առանձնացնելու հատկապես այնպիսիք, որոնցով այնպիսի օրենսդրական դրույթներ են ճանաչվել Կոնվենցիայի խախտումներով ընդունված, որոնք նույնական են մեր երկրի օրենսդրական ակտերին:

Համոզված ենք, որ մեր այս մոտեցումը բնավ նորույթ չէ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերի լայն հրապարակայնությունը, վերջին հաշվով, միտված է ոչ միայն պետական մարմինների և, հատկապես, քրեական հետապնդում իրականացնող մարմինների և դատարանների գործունեության բարելավմանը, այլև գործող օրենսդրության բարեփոխմանը: Սակայն այս խնդիրը, առանց չափազանցության ենք ասում, համար-

վում է բարդագույններից մեկը: Միշտ չէ, որ այս կամ այն երկրի օրենսդրական ակտի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանությունները նույնությամբ կիրառելի են ցանկացած այլ երկրի օրենսդրության նկատմամբ: Հաճախ, կոնկրետ որևէ օրենսդրական դրույթ համարվում է Կոնվենցիայի խախտում, սակայն նույն այդ նորմը այդպիսին չէր համարվի, եթե տվյալ երկրի իրավական համակարգում լինեին այլ՝ լրացուցիչ իրավական դրույթներ: Այսինքն՝ իրավական նորմը քննարկման առարկա է դառնում ոչ թե մեկուսի, այլ գնահատվում է ողջ իրավական համակարգի ասպեկտով:

Այս կարգի բարդությունները նկատելի են նաև սահմանադրական դատարանի գործունեությունում: Թերևս հանգամանորեն կարելի է վերլուծել վերջերս ընդունված մի որոշում, որը խիստ արդիական է և համահունչ ընտրված թեմային: Այսպես՝ սահմանադրական դատարանի 2008թ. նոյեմբերի 25-ի որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող է ճանաչվել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի առաջին մասը: Այդ նորմի իրավական էությունը այն է, որ դրանով ուղղակիորեն վարչական արդարադատության նկատմամբ «mutatis mutandis» սկզբունքով տարածվում են վճռաբեկ վարույթի այն բոլոր կանոնները, որոնք կիրառվում են քաղաքացիական արդարադատության եռաստիճան համակարգում:

Ըստ էության, այդ որոշմամբ անիրավաչափ է համարվել այն, որ եռաստիճան դատական համակարգի պայմաններում ոչ միայն վարչական դատավարության նկատմամբ կիրառվում են միայն վճռաբեկության կարգով դատական ակտերը բողոքարկելու կարգը, այլև այն, որ երկաստիճան համակարգի դեպքում դարձյալ ամբողջությամբ կիրառվում են վճռաբեկության վարույթի կանոնները:

Այս որոշման ընդգծված գիտագործնական հետաքրքրությունը կայանում է, նախ, նրանում, որ սահմանադրական դատարանը,

քննարկելով վարչական դատավարության օրենսդրության դրույթների սահմանադրականության հարցը, հանգամանորեն վերլուծել է նաև դրանց առնչվող միջազգային իրավունքի, այդ թվում՝ Կոնվենցիայի նորմերը (ի դեպ, այս մոտեցումը բնավ եզակի չէ սահմանադրական դատարանի գործունեությունում): Այսպես՝ անդրադառնալով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004թ. դեկտեմբերի 15-ի «Վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության մասին» թիվ (2004)20 հանձնարարականի համապատասխան դրույթներին, հանգում ենք այն եզրակացության, որ հիշյալ իրավական փաստաթղթերը պարտադիր չեն համարում եռաստիճան դատական համակարգը:

Սակայն, հիշյալ միջազգային փաստաթղթերի վերլուծությունը, ըստ սահմանադրական դատարանի, բնավ սպառնիչ չի պատասխանում այն հարցին, թե կոնկրետ դատական ինչպիսի՞ համակարգի միջոցով կարող է ապահովվել արդարադատության մատչելիությունը: Համոզված ենք, որ այս մոտեցումը զուտ տեսական վերլուծության չափանիշներով կարող է և վիճարկելի լինել, սակայն փաստն այն է, որ երկրի բարձրագույն դատական ատյանը ևս առանձին ղեկավարում փաստում է, որ Կոնվենցիան ոչ միշտ է հստակ լուծումներ առաջադրում գործնականում առաջադրված խնդիրներին:

Բնորոշ է այն, որ հիշյալ որոշման պահանջներին համապատասխան Ազգային ժողովի կողմից իրականացված ձեռնարկումները սկզբնական փուլում պարզապես մատնվեցին ձախողման, քանզի այս ղեկավարում ևս համարժեք չէր ընկալվել այն հարցը, թե, վերջին հաշվով, ինչ ընթացակարգերով կարող է երաշխավորվել վարչական դատավարության շրջանակներում արդարադատության մատչելիությունը:

Հիշյալ որոշման հաջորդ առանձնահատկությունը այն է, որ դրանում առկա է ուղերձ Ազգային ժողովին՝ ուժը կորցրած ճանաչելու Հայաստանի Հանրապետության

օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասը, որը վարչական դատարանին լիազորում է գնահատելու վիճարկվող իրավական ակտը նաև սահմանադրականության տեսանկյունից: Բնորոշ է այն, որ բուն վեճի առարկան բացարձակապես չի վերաբերել հիշյալ օրենսդրական դրույթին, այն անգամ փոխկապակցված չի եղել, սակայն անդրադարձ, այնուամենայնիվ, եղել է: Մա այն եզակի ղեկավարից է, երբ սահմանադրական դատարանն օգտագործում է իրեն վերապահված իրավական լծակները՝ քննարկման առարկա օրենսդրական ակտի ընդհանրապես սահմանադրականությանն անդրադառնալու համար: Ընդ որում, անդրադարձը դրսևորվում է ոչ թե որոշման եզրափակիչ, այլ՝ սուկ վերլուծական մասում:

Այսպիսով, մենք հարկադրված ենք երբեմն հիմք ընդունելու այն իրավիճակը, որ միջազգային փաստաթղթերը ոչ միշտ են սպառնիչ պատասխան տալիս կոնկրետ ներպետական իրավական համակարգում ծագած հարցադրումներին: Ընդ որում, դա ոչ թե պայմանավորված է այդ միջազգային փաստաթղթերի որակով, բնավ ոչ, պարզապես դրանցում հիմնականում անդրադարձ է արվում առավել առանցքային, հիմնարար նշանակություն ունեցող ինստիտուտներին: Բացի այդ, չենք կարող անտեսել, որ միջազգային իրավական նորմերը և սկզբունքները երբևէ չեն հետապնդել և ներկայումս չեն հետապնդում ներպետական ողջ օրենսդրական համակարգը միասնական դարձնելու նպատակ: Կարևորը սկզբունքները սահմանելն է, որոնք արդեն տարաբնույթ իրավական երաշխիքներով պետք է գործեն կոնկրետ այս կամ այն երկրում:

Կոնվենցիայի ներազդեցության կարևոր բաղադրատարրերից է նաև միջազգային փորձաքննության ինստիտուտը: Մա, թերևս, լրացնում է նախորդ գործոնը և, միաժամանակ, իր դեֆակտո կիրառմամբ մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ միայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերը բավարար նյութ չեն պարունակում լիարժեք իրավաստեղծ գործունեության համար: Բնա-

կանաբար, դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հիշյալ դատարանը փորձագիտական հիմնարկ չէ, և չի կարող իր նախաձեռնությամբ քննարկման առարկա դարձնել Կոնվենցիայի որևէ դրույթի առնչությամբ ծագած տարաձայնությունները և դուրս գալ կոնկրետ գանգատի քննարկման առարկայից: Բացի այդ, դատական ակտերը և տարընթերցումների տեղիք են տալիս, ինչը ոչ թե պայմանավորված է նրանց որակով, այլ այն փաստով, որ դրանք անմիջականորեն չեն փոխկապակցվում, օրինակ, մշակվող օրինագծի դրույթների հետ:

Գործնականում միջազգային փորձագետներին են ներկայացվում ոչ միայն օրինագծեր, այլև արդեն իսկ ընդունված և վաղուց գործող օրենսդրական ակտեր: Վերջին տարբերակը հատկապես կիրառվում է այն դեպքում, երբ իրավաստեղծ գործունեությունում իրավասու որևէ մեկը նախաձեռնում է գործող օրենսդրական դրույթը վերանայելու գործընթաց, պատճառաբանելով, որ այն չի համապատասխանում Կոնվենցիային, մինչդեռ իրավասու մարմինները հակադարձում են այդ նախաձեռնությանը: Բնորոշ է, օրինակ, Ազգային ժողովի պատգամավոր Ջ.Փոստանջյանի կողմից դեռևս 2008թ. փետրվարին ներկայացված օրինագիծը, որով առաջարկվում էր ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածը, որը քրեական պատասխանատվություն է սահմանում Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերի համար: Ընդ որում, հիմնական փաստարկն այն էր, որ այդ օրենսդրական դրույթը հակասում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված արտահայտվելու ազատությանը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը այդ նախաձեռնության առնչությամբ խորհրդարանին ներկայացրեց բացասական եզրակացություն և բերեց մի շարք հիմնավորումներ: Նախ մատնանշվեց, որ Մահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն. «Իշ-

խանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է»: Բացի այդ, ներկայացվեց դիրքորոշում այն մասին, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը արտահայտվելու ազատությունը չի համարում բացարձակ և հնարավոր է համարում որոշ սահմանափակումներ՝ «պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակական անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

Ինչևէ, այդ փաստարկները հեղինակի և մարդու իրավունքների պաշտպանի կողմից բավարար չդիտվեցին, ինչի արդյունքում այդ օրինագիծն ուղարկվեց Վենետիկի հանձնաժողովի քննարկմանը: Հիշյալ միջազգային փորձագիտական կառույցը ներկայացված օրինագծի առնչությամբ ևս տվեց բացասական եզրակացություն:

Ի դեպ, այս օրինակը հետաքրքիր է այն առումով, որ չնայած արդեն իսկ գործող օրենսդրական դրույթի առնչությամբ առկա էր միջազգային հեղինակավոր փորձագիտական կառույցի միանշանակ եզրակացությունը, այնուամենայնիվ, այդ օրենսդրական դրույթը դարձավ լայն քննարկման առարկա՝ արդեն իշխանությունների նախաձեռնությամբ, ինչի արդյունքում, վերջերս արդեն երկրորդ ընթերցմամբ ընդունվեց օրենք, որով փոփոխություններ կատարվեցին Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 225-րդ, 300-րդ և 301-րդ հոդվածներում:

Տվյալ դեպքում խիստ տրամաբանական է թվում այն հարցը, թե ինչո՞ւ իշխանությունները բարեփոխման նկատառումով անդրադարձան վերը նշված օրենսդրական ակտերին և արդյո՞ք այս գործելաոճը չի կարող օրինաչափության վերածվել և կիրառվել նաև հետագա-

յում: Առաջին հարցին, թերևս, կարելի է պատասխանել հետևյալ կերպ. օրենսդրական ակտի իրավաչափությունը պայմանավորված է ոչ միայն համարժեք խմբագրությամբ, այլև՝ իրավակիրառական պրակտիկայով: Նկատի ունենք այն, որ հաճախ, իսկ դրան երբեմն նպաստում է անհարկի լարված ներքաղաքական իրավիճակը, օրենսդրական որոշ դրույթներ իրենց ոչ բավարար հստակության պատճառով լուրջ տարընթերցումների տեղիք են տալիս: Ներքաղաքական իրավիճակը տվյալ դեպքում նշում են այն իմաստով, որ իրավակիրառական պրակտիկայի նկատմամբ ձևավորվում է անբավարար վստահության մթնոլորտ: Երկրորդ հարցի պատասխանը, թերևս, բխում է նախորդ հարցի պատասխանից, այն է՝ այո, կարելի է դարձնել տարածված գործելաոճ:

Վերը նշված դատողությունների հիմնավորման համար մատնանշենք Վենետիկի հանձնաժողովի՝ 2008թ. հունիսի 13-14-ի «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի փոփոխությունների նախագծի վերաբերյալ» որոշումից հետևյալ եզրահանգումը. «Ձևական առումով քննարկվող դրույթը անհամատեղելի չի թվում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հետ, եթե այն ճիշտ մեկնաբանվի և կիրառվի: Այն փաստը, որ իրավական դրույթն ընդունելի է, դեռևս չի նշանակում, որ այն չի կարող չարաշահվել՝ քննարկվող դրույթը խախտելու վերաբերյալ բավարար ապացույցներ չլինելու պարագայում անգամ մարդկանց անհիմն քրեական հետապնդման ենթարկելու եղանակով ընթացիկ օրենսդրությունը³»:

Իրավակիրառական պրակտիկան որպես չափանիշ ընդունելը ներկայումս լայն տարածում ունի նաև սահմանադրական դատարանի գործունեությունում: Կարելի է բերել տասնյակ օրինակներ, երբ սահմանադրական դատարանը, սկզբունքային տարածայնություններ չունենալով նորմի խմբագրության հետ, այն հակասահմանադրական է ճանաչել ոչ իրավաչափ իրավակիրառական պրակտիկա ձևավորվելու հիմքով: Տվյալ դեպքում հարկ է լինում վերանա-

յել օրենսդրությունը և հստակ սահմանել այնպիսի նորմեր, որոնք պարզապես կբացառեն անիրավաչափ իրավակիրառական պրակտիկան:

Ի դեպ, միջազգային փորձագետների եզրահանգումները միշտ չէ, որ համարժեքորեն հաշվի են առնվում, ինչը պայմանավորված է տարաբնույթ պատճառներով: Օրինակ՝ լայն տարածում ունի այն երևույթը, երբ օրինագիծը մշակելիս հաշվի է առնվում երկրի ներսում ձևավորված իրավագիտակցության աստիճանը, նույնիսկ նշանակություն է տրվում այն գործոնին, թե որքանով է ընկալումը քաղաքականացված: Այսպես՝ պատասխանելով «Առավոտ» օրաթերթի այն հարցին, թե ինչո՞ւ է փորձագետների հավանությանն արժանացած դրույթը հանվել օրինագծից, Ազգային ժողովի պետական-իրավական հանձնաժողովի նախագահը տվել է հետևյալ պատասխանը. «Թեև դա այդպես է, և այդ դրույթն ունի կանխարգելիչ նշանակություն, այնուամենայնիվ, նախաձեռնության հեղինակների կարծիքով, այս փուլում թերևս նպատակահարմար չէր տվյալ դրույթի ներմուծումը՝ հաշվի առնելով օրենքի այս փոփոխության նկատմամբ փոքր-ինչ ծայրահեղ, քաղաքականացված ընկալումը (ընդգծումը մերն է - Է.Գ.)⁴»:

Կարծում ենք՝ այնքան էլ ճիշտ չի լինի միանշանակ պնդել, որ ձևավորված իրավագիտակցությունը առավել հակված է միջազգային իրավունքի չափանիշները հնարավորինս սահմանափակ ընկալելուն: Այս դեպքում դարձյալ իրեն զգացնել է տալիս, այսպես կոչված, մասնագիտական հոգեբանությունը, որի դեպքում հաճախ դատողություններ անելիս ղեկավարվում են ոչ այնքան օբյեկտիվ, որքան՝ գերատեսչական նկատառումներով: Երբեմն էլ իրեն զգացնել է տալիս զուտ քաղաքական հաշվարկներով զուգորդված եզրահանգումներ ներկայացնելու միտումը:

Բազմաթիվ օրինակներ կարելի է բերել վերը նշված եզրահանգումը հիմնավորելու համար, սակայն, հաշվի առնելով խնդրի առանձնահատկությունը և թեմայի հետ սուսկ մասամբ

առնչվելու հանգամանքը, բավարարվենք հետևյալ օրինակով: Քրեական հետապնդում իրականացնող մարմինները հակված են այն տեսակետին, ըստ որի կալանքը, որպես խափանման միջոց, կարող է կիրառվել նաև գուտ հանցագործության ծանրության հիմքով: Ի դեպ, այս տեսակետը ներկայումս իր ամրագրումն ունի նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում. «Գրավը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտի մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով» (134-րդ հոդվածի 1-ին մաս):

Բոլորովին այլ կարծիքի են դատավորներն ու փաստաբանները, մասնավորապես դատական ակտերի և այդ առնչությամբ փաստաբանների միջնորդությունների ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ վերջիններս հակված են մոտեցմանը, ըստ որի առանձին վերցրած հանցագործության ծանրության հատկանիշը հիմք չէ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար:

Մտահոգողը տվյալ դեպքում այն է, որ վերը նշված երկու տեսակետներն էլ, ըստ էության, ոչ միայն ակնհայտ միտումնավոր են, այլև՝ պարզունակ: Հարցի պատասխանը իրականում քիչ առնչություն ունի այդ մոտեցումների հետ և գտնվում է միջին հարթության վրա: Այսպես՝ ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերի, հանցագործության ծանրության հանգամանքը ևս կարող է հիմք հանդիսանալ, սակայն, դա ենթադրում է բացառիկ իրավիճակ. «Միայն իրավախախտման ծանրությունը հաշվի առնելը բավարար չէ: Այնուհանդերձ, այս հիմքը կարելի է օգտագործել միայն այն դեպքում, երբ դատավորը կամ կալանքի որոշում կայացնելու համար օրենքով լիազորված այլ պաշտոնատար անձն իր որոշումը հիմնում է

այնպիսի փաստերի վրա, որոնց օգնությամբ կարելի է ցույց տալ, որ մեղադրյալի ազատ արձակումն իսկապես կխաթարի հասարակական կարգուկանոնը⁵»:

Ասվածից բխում է, որ հանցագործության ծանրության հիմքը պետք չէ, որ ուղեկցված լինի այլ լրացուցիչ այնպիսի հիմքերով, ինչպիսիք են՝ դատաքննությանը խոչընդոտելը, քննությունից խուսափելը և այլն: Դրա փոխարեն դատարանը պետք է ուշադրություն դարձնի այն հանգամանքի վրա, որ որոշ դեպքերում ծանր հանցագործության մեջ կասկածվող անձին չկալանավորելը կարող է հանգեցնել արդարադատության նկատմամբ հասարակական այնպիսի անսպասելի բացասական և սուր դրսևորվող վարքագծի, ինչը հղի է հասարակական կարգուկանոնի խաթարման վտանգով:

Այս դատողության հիմքում ընկած է, մասնավորապես, Լետելիերն ընդդեմ Ֆրանսիայի գործը: Ըստ այդ գործով կայացված վճռի. «Չնայած այնպիսի ծանր հանցագործության կապակցությամբ հակազդեցության հնարավորությունը, ինչպիսին սպանությունն է, լինի դատուժողի հարազատների, թե ողջ բնակչության կողմից, կարող է բավարար լինել հետևանքների առումով մտավախության հիմնավորման համար: Կոնկրետ անկարգություն չի բացահայտվել, և, իրոք, հանցուցյալի մայրն ու քույրը դեմ չէին հայցվորի՝ կալանքից ազատ արձակվելուն⁶»:

Այն, որ տվյալ դեպքում հասարակական կարգի պահպանություն ասելով նկատի է ունեցվում նաև տուժողների կողմից վրեժխնդիր լինելու փաստական հանգամանքը, հիմնավորվում է մեկ այլ գործով. «Տուժողի հարազատների կողմից վրեժ լուծելու վերաբերյալ մտավախությունն անհիմն էր Ի.Ա.-ի ընդդեմ Ֆրանսիայի գործով դատավարությունում, քանի որ նման հատուցման հնարավորությունը քիչ հավանական էր թվում, որովհետև նրանցից շատերը բնակվում էին Լիբանանում⁷»:

Վերը նշված հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ, նախընտրելի ենք համարում հետևյալ առաջարկությունները՝

- նպատակահարմար է վերանայել գործող իրավական ակտերը և դրանց նախագծերը վավերացված միջազգային պայմանագրերին համապատասխանեցնելու վերաբերյալ օրենսդրությունը, բացառել առավելությունը միայն միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին ու սկզբունքներին վերապահելը,

- հարկ է ընդլայնել իրավական ակտերի նախագծերի պետական և մասնագիտական փորձաքննության ենթակա հարցադրումների շրջանակը՝ ներառելով նաև վավերացված միջազգային պայմանագրերին դրանց համապատասխանության հարցը,

- միջազգային փորձագետներին օրինագծեր ներկայացնելիս պարտադիր պայման պետք է համարել դրանց վերաբերյալ հիմնավորումները, առկա տարածայնությունները, ինչպես նաև դրանց հիմքում ընկած Սահմանադրության և սահմանադրական դատարանի որոշումների քաղվածքները ներկայացնելը,

- նպատակահարմար է իրավաստեղծ գործունեության հետ առնչվող բոլոր հանրային ծառայողների համար կազմակերպել նպատակային ուսումնական դասընթացներ, որոնց հիմնական նպատակը կլինի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերում ամրագրված հիմնադրույթների ուսումնասիրությունը,

- արդյունավետ կարող է համարվել Հայաստանի դեմ կայացված յուրաքանչյուր դատական ակտի պահանջների արդյունավետ կատարման նկատառումով քննարկման հրատակ ընթացակարգ նախատեսելը, մասնավորապես՝ ներառելով դրանց առնչությամբ գոր-

ծող օրենսդրությունում փոփոխություն կատարելու կամ նոր իրավական ակտեր ընդունելու, մեղավոր պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու և նմանաբնույթ այլ հարցերը:

Բնականաբար, նշված նկատառումները հազիվ թե սպառիչ լուծում տան առկա խնդիրներին, սակայն, իրավաստեղծ գործունեության ներկա փուլում, կարծում ենք, դրանք կարող են որոշակիորեն նպաստել օրենսդրության որակի բարձրացմանը, ապահովել անհրաժեշտ պատասխանատվություն իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացում:

Ամփոփելով ներպետական օրենսդրության վրա Կոնվենցիայի ներազդեցության հիմնախնդիրներին առնչվող հիմնահարցերի վերլուծությունը, հարկ ենք համարում նկատել, որ այդ գործընթացը ակնհայտ շարունակական է: Ընդ որում, հարկ կլինի ոչ միայն վերանայել այն օրենսդրական դրույթները, որոնք ներկայումս ձևավորված իրավական չափանիշներով են համարվում խոցելի, այլև այնպիսիք, որոնք գոնե այս պահին վիճարկելի չեն համարվում: Իրավունքը դոգմա չէ, իսկ իրավական դրույթների վերաբերյալ եզրահանգումները և տարաբնույթ բնորոշումները ևս քարացած չեն, ու հաճախ է հարկ լինում վերաիմաստավորել դրանք, ներդնել նոր բովանդակություն ու ուղղվածություն: Կարծում ենք՝ իրավական տեսակետների ու հայացքների զարգացման, իսկ երբեմն դրանց վերանայման միտումը նկատելի է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործունեությունում:

¹ Տե՛ս Абашидзе А.Х. , Алисиевич Е.С. Право Совета Европы. Конвенция о защите прав человека и основных свобод: Учебное пособие. - М.: Международ. отношения, 2007. С. 36-37.

² Տե՛ս Mauer B. Le principe de respect de la dignite' humaine et la Convention europeenne des droits de l'homme, Mintpellier: Universite Montpellier, 1988. P. 56.

³ Տե՛ս Joint Opinion on tye amendments of 17 March 2008 to the Law on Conducting Meetings, Assemblies, Rallies and Demonstrations of the of Armenia by the Venice Commission and OSCE/ODIHR by the Venice Commission at its 75th Plenary Session (Venice, 13/06/2008-14/06/2008) .

⁴ Տե՛ս «Վիճահարույց դրույթը հեղինակները հանել էին օրենքից», «Առավոտ» օրաթերթ, 52/34098, 21-ը մարտի 2009թ.

⁵ Տե՛ս Քոչարյան Վ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, ուսումնական նյութերի ժողովածու: Երևան, 2007, էջ 238-329:

⁶ Տե՛ս Լետելիերն ընդդեմ Ֆրանսիայի գործը, 12369/86, 26-ը հունիսի, 1991թ.:

⁷ Տե՛ս Ի.Ա.-ն ընդդեմ Ֆրանսիայի գործը, 7652/77, 24-ը հունիսի, 1992թ.: